ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
հասարակություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz

ՀՀ պատական
կառավարման
ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 1.

Համայնքի ավագանու իրավական կարգավիճակը, ընդհանուր և վերահսկողական բնույթի լիազորությունների և գործառույթների շրջանակը

Երևան, 2026

Ուսումնական մոդուլը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ ԳՄՀԸ/GIZ համագործակցության շրջանակում **«Ավագանու անդամների վերապատրաստման կարիքների գնահատում և կարողությունների զարգացում»** ծրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 7

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ..... 8

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ) 11

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)..... 38

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 42

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 46

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....47

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոդուլի նպատակը	Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում
Մոդուլի խնդիրները	Տեսական և պրակտիկ ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները ավագանու իրավական կարգավիճակի և համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, գործունեության ապահովման, վերակազ-մակերպման, լուծարման գործընթացներում և «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքներով ավագանուն վերապահված լիազորությունների մասին իրազեկվածության շրջանակը, բարձրացնել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման գործընթացներում ակտիվ ներգրավվա-ծություն ունենալու կարողությունների զարգացմանը, խթանել ավագանուն վերապահված վերահսկողական բնույթի լիազորությունների արդյունավետ իրականացման հմտությունների ձևավորմանը, ընդլայնել ավագանու կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման կարգի ու պայմանների իրավակարգա-վորումների մասին իրազեկվածության շրջանակը:
Մոդուլի տևողությունը	1 – 4 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ունկնդիրը պետք է առնվազն ընդհանրական գիտելիքներ ունենա ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսատնտեսական հիմունքների, համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեի հիմնական տարրերի վերաբերյալ:
Ուսումնասիրվող թեմաները	**Թեմա 1.** Ավագանու իրավական կարգավիճակը և լիազորությունների շրջանակը համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, գործունեության ապահովման, վերակազմակերպման և լուծարման գործընթացներում **Թեմա 2.** «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով համայնքի ավագանուն վերապահված լիազորու-թյունները **Թեմա 3.** Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը և

	ավագանու լիազորությունները համայնքի սեփականության տնօրինման գործընթացներում **Թեմա 4.** Համայնքի ավագանուն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված վերահսկողական բնույթի լիազորությունները **Թեմա 5.** Համայնքի ավագանու կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման կարգն ու պայմանները
Մոդուլի գնահատման կարգը և միջոցները	Գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Թեստային առաջադրանքը կազմված է մոդուլի թեմաներին անդրադարձող 15 հարցից: Թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի համար սահմանված է միավոր՝ ելնելով դժվարության մակարդակից և թեմային համապատասխանությունից: Թեստային առաջադրանքը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ճիշտ պատասխանները կազմում են առաջադրանքի բոլոր հարցերի առնվազն 70%-ը:
Վերապատրաստման դասընթացից ակնկալվող արդյունքները *(գիտելիքներ, հմտություններ, կարողություններ)* Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո ունկնդիրը պետք է.	
Արդյունք 1.	*կարողանա ներկայացնել ավագանու լիազորությունների շրջանակը համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, գործունեության ապահովման, վերակազմակերպման և լուծարման գործընթացներում*
Արդյունք 2.	*կարողանա նշել աշխատակազմի, բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակները և առանձնահատկությունները*
Արդյունք 3.	*կարողանա ներկայացնել համայնքային ծառայության բնագավառում օրենքով համայնքի ավագանուն վերապահված հիմնական լիազորությունները, պատկերացնել այդ բնագավառում ավագանու կողմից ընդունվող որոշումների շրջանակը և հասկանալ դրանց կարևորությունը*
Արդյունք 4.	*կարողանա սահմանել սեփականության իրավունք, տիրապետման իրավունք, օգտագործման իրավունք, տնօրինման իրավունք հասկացությունները*

Արդյունք 5.	*կարողանա ձևակերպել և ներկայացնել համայնքի սեփա-կանություն հանդիսացող գույքի գոյացման աղբյուրները*
Արդյունք 6.	*տիրապետի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման ընթացակարգերին ու մեխանիզմներին*
Արդյունք 7.	*ունակ կլինի օգտագործել ստացած գիտելիքները համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման գործընթացներում*
Արդյունք 8.	*իմանա «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ավագանուն վերապահված վերահսկողական բնույթի լիազորությունները*
Արդյունք 9.	*կարողանա ակտիվ մասնակցություն ունենալ ավագանու իրավաստեղծ գործունեությանը, նպաստել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, կարծիքների հավաքագրման աշխատանքների իրականացմանը*
Արդյունք 10.	*իմանա «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ավագանու կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման կարգն ու պայմանները*
Մոդուլի ուսուցման մեթոդաբանությունը	*Մոդուլի ուսուցման ընթացքում, ի լրումն ներկայացված տեսական նյութի մատուցման, անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ ուսուցման առնվազն հետևյալ եղանակները.* • *աշխատանք խմբերով,* • *անհատական առաջադրանքների կատարում,* • *ինքնակրթություն՝ լրացուցիչ նյութերի ընթերցում և դիտում:*
Մոդուլի ուսուցման համար անհրաժեշտ ռեսուրսները	• *մոդուլին և թեմայի առանձնահատկություններին տիրապետող փորձագետ* • *ուսումնական տարածք՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՀՀՀԶԾ	Համայնքի ինգամյա զարգացման ծրագիր
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Համայնքապետարանի աշխատակազմ	Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:
Համայնքային բյուջետային հիմնարկ	Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար համայնքի ավագանու ստեղծած կազմակերպություն, որն իր հիմնական գործունեությունն իրականացնելիս շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում և գործունեության հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվում են հիմնականում համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Համայնքային հիմնարկն իրավաբանական անձ չէ և գործում է համայնքի ավագանու հաստատած կանոնադրության հիման վրա:
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:
Համայնքային առևտրային կազմակերպություն	Իր գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային), իրավաբանական անձ հանդիսացող համայնքային կազմակերպություն:
Իրավաբանական անձ	Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
Համայնքային	Մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է

ծառայությունը	Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:
Սեփականության իրավունքը	Սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:
Գույքի տիրապետման իրավունքը	Գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:
Գույքի օգտագործման իրավունքը	Գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:
Գույքի տնօրինման իրավունքը	Գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:
Համայնքային գույքի կառավարում	Համայնքային գույքի նպատակային և ծրագրային կառավարման, ներառյալ՝ հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման, համայնքային գույքի շրջանառության, ինչպես նաև գույքի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված գործընթաց:
Նորմատիվ իրավական ակտ	Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:
Ենթաօրենսդրական	Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով

նորմատիվ իրավական ակտ	օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ:
Անհատական իրավական ակտ	Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:
Ներքին (լոկալ) իրավական ակտ	Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:
Հանրային քննարկում	Իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով սույն օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց:

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ)

Թեմա 1. Ավագանու իրավական կարգավիճակը և լիազորությունների շրջանակը համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, գործունեության ապահովման, վերակազմակերպման և լուծարման գործընթացներում

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և այլ օրենքներով նախատեսված_լիազորությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ՝ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾ, ՄԱՍԸ	**ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
ՀՈԴՎԱԾ 13, մաս 8	**համայնքի անունից** իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ:
ՀՈԴՎԱԾ 18, մաս 15	օրենքով սահմանված կարգով **որոշում է կայացնում** համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին:
ՀՈԴՎԱԾ 18, մաս 28	**համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:** Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատողների քանակը, կառուցվածքը կամ հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու կամ լրացնելու հարցում **որոշում է կայացնում** համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին: **Աշխատակազմի աշխատողների քանակը, կառուցվածքը կամ հաստիքացուցակը հաստատված, ինչպես նաև փոփոխված կամ լրացված է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:**
ՀՈԴՎԱԾ 35, մաս 11	**որոշում է, և համայնքի ղեկավարը նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ ՀՈԱԿ-ների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով:**
ՀՈԴՎԱԾ 81	**իր որոշմամբ համայնքի լիազորությունների**

	իրականացման նպատակով՝ կարող է ստեղծել հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ: **Համայնքային հիմնարկները և կազմակերպությունները կարող են լինել՝** **1) բյուջետային հիմնարկներ.** **2) հարյուր տոկոսով համայնքի սեփականություն հանդիսացող առևտրային կազմակերպություններ և համայնքի հիմնադրած ոչ առևտրային կազմակերպություններ.** **3) համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ:**

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

****

Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում:

****

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հիմնադիրը համայնքի ավագանին է: Աշխատակազմն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

****

Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, իր կանոնադրության, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հիման վրա:

****

Աշխատակազմն ապահովում է համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրանց մասնակցությունը:

****

Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

****

Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և հանրային մատուցած ծառայությունների համար կարող են օրենքով սահմանված չափով և կարգով գանձվել պետական և տեղական հարկեր, տուրքեր և վճարներ:

****

Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:

****

Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կնիք, դրոշմակնիքներ, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

Աշխատակազմի (բացառությամբ Երևանի քաղաքապետարանի, Գյումրու և Վանաձորի համայնքապետարանների աշխատակազմերի) կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն քանակը սահմանում է պետական լիազորված մարմինը, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանմանը ներկայացվող հիմնական պահանջները սահմանում է «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազոր մարմինը:

****

Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումը կարող է ստեղծվել միայն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված լինելու դեպքում:

****

Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է համայնքի ավագանին:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի ղեկավարն իր պաշտոնն ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքները (համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում), աշխատողների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

Համայնքի նոր ղեկավարի լիազորություններն ստանձնելուց հետո համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք շարունակում են կատարել իրենց պարտականությունները մինչև այդ պաշտոններում նոր նշանակումներ կատարվելը: Համայնքի ղեկավարը աշխատակազմի և հիմնարկների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը ավագանու կողմից հաստատվելուց (վերահաստատվելուց) հետո՝ մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններում:

Համայնքային ծառայողների նշանակման և զբաղեցրած պաշտոնից ազատման կարգը սահմանվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Համայնքի ղեկավարը իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարը համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ:

Ավագանու կողմից համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

ՀՈԱԿ-ների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգը սահմանված են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:

ՀՈԱԿ-ը ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ: ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

****

ՀՈԱԿ-ը վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

****

ՀՈԱԿ-ը ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

****

ՀՈԱԿ-ը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ավագանու, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, իր կանոնադրությամբ:

****

ՀՈԱԿ-ը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

****

ՀՈԱԿ-ը ունի անվանում, որը պետք է ներառի «համայնքային ոչ առևտրային կազմակերպություն» բառերը, ինչպես նաև ցուցում՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության բնագավառի մասին, եթե անվանումից դա ակնհայտ չէ:

****

ՀՈԱԿ-ը ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուներով:

****

ՀՈԱԿ-ը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ միայն հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

****

ՀՈԱԿ-ը կառավարումն իրականացնում են համայնքի ղեկավարը և օրենքով սահմանված կարգով նշանակված գործադիր մարմինը՝ ՀՈԱԿ-ի տնօրենը:

Անհրաժեշտ է հիշել, որ ...

ՀՈԱԿ-ի իրավական կարգավիճակի, դրա ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգի, ինչպես նաև համայնքի ՏԻՄ – երի հետ ՀՈԱԿ-ի փոխհարաբերությունների առանձնահատկությունները սահմանվել են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին համայնքի ղեկավարը նշանակում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերին համապատասխան:

Կարևոր է իմանալ, որ ...

ՀՈԱԿ-ի ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թ. մարտի 20-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով:

****

Մինչև ՀՈԱԿ-ի ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը համայնքի ղեկավարը կարող է նշանակել ՀՈԱԿ-ի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով: Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք ամիս ժամկետով:

Կարևոր է իմանալ, որ ...

ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը ընտրվում է այդ նպատակով համակարգչում զետեղված ծրագրով պատահական ընտրված 5 թեկնածուներից՝ մրցույթի անցկացման օրվան նախորդող աշխատանքային օրը՝ հետևյալ հարաբերակցությամբ՝

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Հանձնաժողովում.

ա. երկուսը՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ.

բ. երկուսը՝ Երևան քաղաքի ավագանու անդամ.

գ. մեկը՝ տվյալ համայնքում գործող կրթական, գիտական, մշակութային, սպորտային կամ որևէ այլ կազմակերպության ներկայացուցիչ (ՊՈԱԿ կամ ՀՈԱԿ):

2) ՀՀ մարզերի համայնքապետարանների աշխատակազմերի հանձնաժողովում.

ա. երկուսը՝ համապատասխան մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներ.

բ. մեկը՝ համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ (համայնքի ղեկավար, տեղակալ, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայող).

գ. մեկը՝ համայնքի ավագանու անդամ.

դ. մեկը՝ տվյալ համայնքում գործող կրթական, գիտական, մշակութային, սպորտային, առողջապահական կամ որևէ այլ կազմակերպության ներկայացուցիչ (ՊՈԱԿ կամ ՀՈԱԿ):

Համայնքային հիմնարկի հիմնադիրն համայնքն է՝ ի դեմս համայնքի ավագանու:

****

Համայնքի անունից հիմնարկ ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ: Հիմնարկի կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

****

Հիմնարկը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով և կարգադրություններով, իր կանոնադրությամբ:

****

Հիմնարկն ունի անվանում, հիմնադրի կողմից իրեն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույք, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք և անհատականացման այլ միջոցներ:

****

Հիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

****

Հիմնարկի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ:

****

Հիմնարկն հիմնադրի անունից, իր կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակին համապատասխան, կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:

****

Հիմնարկին պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրա պաշտպանության իրավունքը, հիմնարկն իրականացնում է հիմնադրի հայեցողությամբ՝ նրա անունից:

****

Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:

****

Հիմնարկի պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են համայնքի բյուջեի միջոցներից:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով համայնքների կարգավիճակը քաղաքացիական իրավահարաբերություններում հավասարեցված է իրավաբանական անձանց հետ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածով սահմանված է, որ համայնքի տնտեսական գործունեության հետ կապված իրավահարաբերությունները և համայնքը, իր լիազորությունների իրականացման նպատակով, համայնքի ավագանու որոշմամբ կարող է ստեղծել առևտրային կազմակերպություններ:

****

Առևտրային կազմակերպություններ հիմնելու իրավական հիմքերը արտահայտված են «Տեղական ինքնակառավարման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով:

****

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված են առևտրային կազմակերպությունների տեսակները, որոնք կարող են ունենալ հետևյալ կազմակերպաիրավական ձևերը.

1. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.
2. լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն.
3. փակ բաժնետիրական ընկերություն.
4. բաց բաժնետիրական ընկերություն.
5. կոոպերատիվ:

****

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հիմնադրման դեպքերում հաստատում է նաև համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն դրանց կազմի թվի կեսից պակաս:

Թեմա 2. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով համայնքի ավագանուն վերապահված լիազորությունները

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐ

<u>Անհրաժեշտ է իմանալ, որ ...</u>

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով նախատեսված պաշտոններ զբաղեցնող բոլոր անձանց վրա:

****

Համայնքային քաղաքական, համայնքային վարչական, համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համայնքային ծառայողներ չեն համարվում:

ԱՎԱԳԱՆՈՒՆ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾԸ, ՄԱՍԸ	**ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
ՀՈԴՎԱԾ 13, մաս 2	**Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման ծառայության հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ:** **Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:** Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկել համապատասխան մասնագետի:
ՀՈԴՎԱԾ 13, մաս 2.2	**15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների** (բացառությամբ Երևան համայնքի) աշխատակազմերի մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը **բաղկացած են 6 անդամներից, որոնք ընտրվում են այդ նպատակով համակարգչում զետեղված և պատահական ընտրված թեկնածուներից՝ յուրաքանչյուր մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ.** ա) երկուսը՝ համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ. բ) երկուսը՝ համապատասխան համայնքի աշխատակազմի ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, տեղակալ, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայողներ). **գ) մեկը՝ համայնքի ավագանու անդամ.** դ) մեկը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչ:
ՀՈԴՎԱԾ 16, մաս 2	**Առաջին անգամ** համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է հանդիսավոր պայմաններում համայնքի ղեկավարի և **համայնքի ավագանու անդամների ներկայությամբ** տրված երդմամբ:

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Երևանի քաղաքապետարանի մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը բաղկացած են 6 անդամներից, որոնք ընտրվում են այդ նպատակով համակարգչում զետեղված և պատահական ընտրված թեկնածուներից՝ յուրաքանչյուր մրցույթ կամ ատեստավորում անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ՝ հետևյալ հարաբերակցությամբ.

ա) երկուսը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչներ.

բ) երկուսը՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ.

գ) երկուսը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչներ:

****

Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքային ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ չեն սահմանված:

****

Համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Կարևոր է իմանալ, որ ...

Համայնքային ծառայողն իրավունք չունի՝ **լինել նույն համայնքի ավագանու անդամ:**

****

Համայնքային քաղաքական պաշտոններն են **համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:**

****

Համայնքային հայեցողական պաշտոններն են համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարի տեղակալի օգնականի, **համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների** պաշտոնները:

****

Համայնքային վարչական պաշտոններն են Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, **բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնները:**

****

Վարչական, **բացառությամբ 1000-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարի**, պաշտոնները կարող են զբաղեցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, **որոնք ունեն բարձրագույն կրթություն:**

****

Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, **վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ:**

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, **վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ**

Թեմա 3. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը և ավագանու լիազորությունները համայնքի սեփականության տնօրինման գործընթացներում

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

****

Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:

****

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է

համայնքի սեփականությունը:

****

Համայնքի պարտադիր խնդիրներից է՝ համայնքի գույքի կառավարումը:

****

Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինի՝

համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ	
ՀՈԴՎԱԾԸ	**ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**
ՀՈԴՎԱԾ 129	Համայնքների ՏԻՄ-երը՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ՝ իրենց իրավասության շրջանակներում:
ՀՈԴՎԱԾ 134	**Անշարժ գույք** են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության: **Շարժական գույք է համարվում անշարժ չհամարվող գույքը:**
ՀՈԴՎԱԾ 135	**Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:** Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները: **Շարժական գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:** Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կարգը և դրանց գրանցումը մերժելու հիմքերը սահմանվում են օրենքով:
ՀՈԴՎԱԾ 163	Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն

	օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով: Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի:

Կարևոր է իմանալ, որ ...

Շարժական գույք է հանդիսանում՝ անշարժ չհամարվող ցանկացած գույքը, ներառյալ՝ կանխիկ դրամական միջոցները, ապագայում ձեռք բերվելիք շարժական գույքը և գույքային իրավունքները, մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքները, սեփականության իրավունքի պահպանմամբ առք ու վաճառքի իրավունքը, շրջանառության մեջ գտնվող ապրանքները, պահանջի իրավունքները, մեկ տարի և ավելի ժամկետով կնքված շարժական գույքի վարձակալության իրավունքը, կոմիսիայի առարկա շարժական գույքի նկատմամբ իրավունքները, օդանավերը, հաստոցները, սարքավորումները, գյուղատնտեսական տեխնիկան, գյուղատնտեսական մթերքները, կենդանիները և թռչունները, ներմուծված, սակայն չմաքսազերծված շարժական գույքը և այլ շարժական գույքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ՝ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
NN	**ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
1.	Համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին (ներառյալ՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրով նախատեսված դեպքերում, բացառությամբ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի), որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:
2.	Հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման

	փաստաթղթերը:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ավագանին իրավունք չունի նշանակելու տեղական հանրաքվե, անվստահություն հայտնելու համայնքի ղեկավարին, ընդունելու կամ փոփոխելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ՝ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾԸ, մասը, կետը	**ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**
ՀՈԴՎԱԾ 35, մաս 1 կետ 16	Համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:
ՀՈԴՎԱԾ 35, մաս 1 կետ 18	Առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին:
ՀՈԴՎԱԾ 38. մաս 1 կետ 3	Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:
ՀՈԴՎԱԾ 42. մաս 1 կետ 10	Իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:
ՀՈԴՎԱԾ 42. մաս 1 կետ11	Մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են **ՀՀԶԾ-ի** բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:
ՀՈԴՎԱԾ 43. մաս 1 կետ 2	Մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են **ՀՀԶԾ-ի** բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

ՀՈԴՎԱԾ 59. **մաս 1, կետ 4**	Ավագանուն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը, դրան համապատասխան տնօրինում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:
ՀՈԴՎԱԾ 77. **մաս 3**	Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: **Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում,** համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:
ՀՈԴՎԱԾ 77. **մաս 4**	Գույքագրման փաստաթղթերին կցվում է համայնքի ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը ներկայացվում են ավագանու հաստատմանը: Ընթացիկ քարտեզի փոփոխությունները կատարվում են գույքագրման փաստաթղթերի համար սույն հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան:

<u>Անհրաժեշտ է իմանալ, որ ...</u>

Համայնքի սեփականություն կարող են դառնալ համայնքի տարածքում գտնվող մանկապարտեզները, կոմունալ տնտեսության և այլ հաղորդակցության ուղիները, ջրմուղի, կոյուղու, ոռոգման, ջեռուցման, աղբահանության համակարգերը:

****

Համայնքի սեփականություն կարող են դառնալ նաև համայնքի տարածքում գտնվող մասնագիտացված դպրոցները, ակումբները, մշակույթի տները, թատրոնները, կինոթատրոնները, թանգարանները, գրադարանները, ցուցահանդեսները, շուկաները, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները և տրանսպորտային կազմակերպությունները, փողոցները, հրապարակները, կամուրջները, բազմաբնակարան շենքերի բնակարանները և ոչ բնակելի տարածքները, ընդհանուր օգտագործման տարածքները, գերեզմանատները, ինչպես նաև վարչական շենքերը, կրթական, մշակութային, մարզական և այլ շենքերն ու շինությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, տրանսպորտային միջոցները, գազամատակարարման, էլեկտրամատակարարման ներհամայնքային ցանցերը, խմելու և ոռոգման ջրատարները, ինչպես նաև անշարժ ու շարժական այլ գույք:

Համայնքի սեփականությունը գոյանում է՝

1) պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքի սեփականությանը հանձնելուց.

2) համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունից.

3) համայնքի բյուջեի եկամուտներից և օրենքով չարգելված այլ ֆինանսական մուտքերից.

4) համայնքի բյուջեի հաշվին ձեռք բերված գույքից.

5) բարեգործական հատկացումներից, քաղաքացիների, հիմնարկների և կազմակերպությունների նվիրատվություններից.

6) օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Համայնքի սեփականության օտարման սահմանափակումը

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերը կարող են օտարվել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված դեպքերում:

****

Համայնքի հողի օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները:

****

Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն օգտագործվում են օրենքով սահմանված կարգով և ուղղվում են համայնքի բյուջե:

****

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման այլ սահմանա-փակումները սահմանվում են օրենքով:

****

Համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը (տնտեսային և ներտնտեսային ոռոգման համակարգերը) օտարման ենթակա չեն:

Կարևոր է իմանալ, որ ...

Վարչական ղեկավարը իրավունք ունի՝ առաջարկություն ներկայացնելու համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ:

****

Համայնքն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ,

կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

****

Համայնքը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՒՄ ԵՆ՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա ծրագիրը,

2. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման ծրագիրը,

3. Համայնքի սեփականություն հանդիսացող սեփականություն հանդիսացող շարժական գույքի կառավարման ամենամյա ծրագիրը:

Թեմա 4. Համայնքի ավագանուն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված վերահսկողական բնույթի լիազորությունները

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև:

****

Ավագանին գործում է իր կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, հանձնաժողովների, խմբակցությունների աշխատանքի միջոցով:

Համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ համայնքի ավագանու վերահսկողական բնույթի լիազորությունները իրականացվում են՝ համայնքի ղեկավարին համայնքային կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացքում օրինականության պահպանման և արդյունավետության ապահովման նպատակներով:

****

Վերահսկողությունը ենթադրում է ստուգել, թե արդյոք ամեն ինչ համապատասխանում է օրենսդրությամբ ամրագրված իրավակարգավորումներին և սահմանված սկզբունքներին:

****

Վերահսկողությունը ապահովում է համայնքային ռեսուրսների արդյունավետ և օրինական օգտագործումը՝ նախատեսված նպատակներին հասնելու համար:

****

Վերահսկողությունը չափում է իրական կատարողականի շեղումը ստանդարտ կատարողականից, բացահայտում է նման շեղումների պատճառները և օգնում է ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Հարկավոր է հիշել, որ ...

Ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը **պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովում:** Քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը կցվում է ավագանու նիստի օրակարգի նյութերին:

Եթե մինչև 9 ավագանու անդամ ունեցող համայնքում համայնքի ավագանու որոշմամբ նույնպես ստեղծվել են ավագանու հանձնաժողովներ, ապա ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն ավագանու իրավասու հանձնաժողովում, իսկ քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը կցվում է ավագանու նիստի օրակարգի նյութերին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ՝ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾԸ, ՄԱՍԸ	**ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ**
ՀՈԴՎԱԾ 18, մաս 1, կետ 5.1	Հաստատում է համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները և վերահսկում դրանց իրականացումը:
ՀՈԴՎԱԾ 18, մաս 1, կետ 6	Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը:
ՀՈԴՎԱԾ 18, մաս 1, կետ 9	Վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ:
ՀՈԴՎԱԾ 20, մաս 1, կետ 3	**Համայնքի ավագանու անդամն իրավունք ունի՝** համայնքի ղեկավարից պահանջելու և ստանալու նրա, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:
ՀՈԴՎԱԾ 82, մաս 8	**ՀՀԶԾ-ում** փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ **համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների կողմից՝** հաշվետու տարում համայնքի ՏԱՊ-ի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը համայնքի ղեկավարի ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հարկավոր է իմանալ, որ ...

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ **համայնքների բյուջեների կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, ԱԺ-ն և պետական վերահսկողական ծառայությունը՝** օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

****

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

****

Համայնքի ղեկավարը, համայնքապետարանի աշխատակազմը, բյուջետային հիմնարկների պաշտոնատար անձինք համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնող անձանց պարտականությունների կատարումը խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքի և բյուջետային գործընթացի նկատմամբ ընդհանուր վերահսկողությունն իրականացնող ավագանին իրեն վերապահված այդ լիազորությունը կարող է իրականացնել **ուղղակի և անուղղակի եղանակներով: Առաջին դեպքում ավագանին իրավազոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունն ու որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ:**

Երկրորդ դեպքում ավագանին կարող է հրավիրել անկախ աուդիտորական կազմակերպություն, որը իրականացնելով ստուգումներ բյուջետավարման գործընթացի օրինականության նկատմամբ՝ ավագանուն ներկայացնում է տեղեկություններ և հաղորդումներ: Ընդ որում **այդ կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է համայնքի բյուջեի միջոցների հաշվին:**

Համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ անգամ, ավագանուն ներկայացնում է հաղորդումներ բյուջեի կատարման ընթացքի մասին: Բյուջետային տարին ավարտվելուց հետո, համայնքի ղեկավարը պետք է ներկայացնի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն: Այն դեպքում, երբ ավագանին, իր վերահսկողական գործառույթն իրականացնում է անկախ աուդիտորական կազմակերպության միջոցով, ապա համայնքի ղեկավարից բացի ավագանին լսում և քննարկում է նաև այդ եզրակացությունը, որից հետո ընդունում է համապատասխան որոշում:

Համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ հանրային վերահսկողությունը

կարող է դրսևորվել նաև ոչ անմիջականորեն, երբ բնակչության կողմից բարձրաձայնված հարցերը ներկայացվում են համայնքի ավագանուն կամ համայնքի ավագանու անդամների միջոցով: Այս պարագայում, համայնքի ավագանին, օգտվելով իր ներկայացուցչական մարմին լինելու իրավական կարգավիճակից, ավագանուն ընձեռված վերահսկողական լիազորությունների շրջանակում իրացնում է նաև հանրության կողմից հանրային վերահսկողության արդյունքում արձանագրված բացերն ու թերությունները և այդ հիմքով իրականացնում է համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ համապատասխան վերահսկողություն:

Թեմա 5. Համայնքի ավագանու կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման կարգն ու պայմանները

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, **որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս):

***

Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ):

****

Նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված է Հայաստանի ժողովրդի, Հայաստանի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:

****

Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

****

Նորմատիվ իրավական ակտ է համարվում նաև նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի գործողությունը դադարեցնող իրավական ակտը, նույնիսկ այդ փոփոխությունների կամ լրացումների իրավական նորմ չպարունակելու դեպքում:

****

Նորմատիվ իրավական ակտերում սահմանվում են վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին վերաբերող հանրային քննարկումների ներկայացվող նախագծերի, նախագծերի պարտադիր փորձաքննության և ժամկետների, հանրային քննարկումներին ներկայացվող պահանջների, օրենսդրական տեխնիկայի, նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի, նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջների, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթները սահմանված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով:

Հարկավոր է իմանալ, որ ...

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում

թվարկված են համայնքի ավագանու լիազորությունները: Համայնքի ավագանին կարող է ենթաօրենսդրական իրավական ակտ ընդունել բացառապես օրենքով թվարկված այդ լիազորությունների շրջանակում: Օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում նշված ՀՀՋԾ-ի, ՄԺԾԾ-ի, տարեկան բյուջեի նախագծերը հաստատելիս, տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակների ու դրույքաչափերի, համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը, համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելիս համայնքի ավագանին պետք է ընդունի ենթաօրենսդրական ակտեր:

****

Համայնքի ղեկավարը վերոնշյալ նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը համայնքի ավագանու կողմից ընդունված՝ համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ:

Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն տրամադրում է տեղեկատվություն:

****

Հանրային քննարկումների նպատակը իրավական ակտերի նախագծերի և համայնքային հարցերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքագրման աշխատանքների իրականացումն է:

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Համայնքի ղեկավարը կազմակերպում է նաև տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին:

Հետաքրքիր է իմանալ, որ ...

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով՝ համայնքային

նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանակոչման և անվանափոխման վերաբերյալ որոշումներ ընդունելիս, միայն բացառիկ դեպքերում է նշանավոր որևէ անհատի անվամբ մինչև նրա մահվան հինգ տարին լրանալն անվանակոչում կամ անվանափոխում կատարելու վերաբերյալ կայացնում որոշում այդ նպատակով անցկացված հանրային լսումների արդյունքների հիման վրա:

****

Մանկապատանեկան մարզական կազմակերպությունների անվանակոչումը և անվանափոխումը կատարվում են Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում)***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Համայնքապետարանի աշխատակազմ	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:
Սեփականության իրավունքը	Գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:
Նորմատիվ իրավական ակտ	Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ:
Գույքի օգտագործման իրավունքը	Սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:
Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ	Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:
Ներքին (լոկալ) իրավական ակտ	Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:
Անհատական իրավական ակտ	Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում).***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Համայնքապետարանի աշխատակազմ	Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:
Սեփականության իրավունքը	Սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:
Նորմատիվ իրավական ակտ	Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:
Գույքի օգտագործման իրավունքը	Գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:
Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ	Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ:
Ներքին (լոկալ) իրավական ակտ	Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, քաղաքացիաիրավական կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից:
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:
Անհատական իրավական ակտ	Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին		
2.	Համայնքապետարանի աշխատակազմի կառավարումն իրականացնում է		
3.	Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման		
4.	Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է		
5.	Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին պաշտոնի նշանակում է		
6.	Հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը		
7.	Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը:		
8.	Նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով		
9.	Համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետներին պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է		
10.	Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է		

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին		
2.	Համայնքապետարանի աշխատակազմի կառավարումն իրականացնում է		
3.	Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման		
4.	Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է		
5.	Առողջապահական համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ղեկավարին պաշտոնի նշանակում է		
6.	Հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը		
7.	Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը:		
8.	Նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով		
9.	Համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետներին պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է		
10.	Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի կանոնադրություն, որը հաստատում է		

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարց 1. Համայնքային ծառայությունը՝

1) մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը.
2) **մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը.**
3) արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն պահանջող մասնագիտական գործունեություն, որը կատարվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման նպատակով:

Հարց 2. Համայնքի ավագանին՝

1) գործադիր մարմին է.
2) խորհրդակցական մարմին է.
3) **ներկայացուցչական մարմին է:**

Հարց 3. Համայնքապետարանի աշխատակազմը՝

1) կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար համայնքի ավագանու ստեղծած կազմակերպություն է, որն իր հիմնական գործունեությունն իրականացնելիս շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում և գործունեության հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվում են հիմնականում համայնքի բյուջեի միջոցների հաշվին.
2) իր գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային), իրավաբանական անձ հանդիսացող համայնքային կազմակերպություն է.
3) **իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:**

Հարց 4. Համայնքային գույքի կառավարումը՝

1) համայնքային գույքի նպատակային և ծրագրային կառավարման, գույքի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված միջոցառում է.

2) **համայնքային գույքի նպատակային և ծրագրային կառավարման, ներառյալ՝ հաշվառման, գնահատման, համայնքային սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման, համայնքային գույքի շրջանառության, ինչպես նաև գույքի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված գործընթաց է.**
3) համայնքային գույքի սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման, համայնքային գույքի շրջանառության, ինչպես նաև գույքի պահպանվածության ապահովման և վերահսկողության իրականացման գործընթաց է:

Հարց 5. Համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշումներ ընդունում է՝

1) համայնքի ղեկավարը.
2) համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին համապատասխան մարզպետի համաձայնությամբ.
3) **համայնքի ավագանին:**

Հարց 6. Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է՝

1) համայնքի ղեկավարը.
2) **աշխատակազմի քարտուղարը**.
3) համայնքի ավագանին:

Հարց 7. ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը ընտրվում է՝

1) **այդ նպատակով համակարգչում զետեղված ծրագրով պատահական ընտրված 5 թեկնածուներից.**
2) համայնքի ղեկավարի որոշմամբ.
3) աշխատակազմի քարտուղարի հրամանով:

Հարց 8. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին որոշումն ընդունում է՝

1) համայնքի ղեկավարը.
2) ՀՀ Ազգային ժողովը.
3) **համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին:**

Հարց 9. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է՝

1) **համայնքի ղեկավարը.**
2) համայնքի ավագանին.
3) ՀՀ հարկային պետական ծառայությունը:

Հարց 10. Համայնքի սեփականությունը գոյանում է՝

1) պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքի սեփականությանը հանձնելուց և համայնքի բյուջեի հաշվին ձեռք բերված գույքից.
2) համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունից և բարեգործական հատկացումներից, քաղաքացիների, հիմնարկների և կազմակերպությունների նվիրատվություններից.
3) **պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքի սեփականությանը հանձնելուց, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունից, համայնքի բյուջեի եկամուտներից և օրենքով չարգելված այլ ֆինանսական մուտքերից, համայնքի բյուջեի հաշվին ձեռք բերված գույքից, բարեգործական հատկացումներից, քաղաքացիների, հիմնարկների և կազմակերպությունների նվիրատվություններից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից**:

Հարց 11. Ո՞վ է վերահսկում համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը.

1) **համայնքի ավագանին.**
2) համայնքի ղեկավարը.
3) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Հարց 12. Ի՞նչ իրավունք ունի ավագանու անդամը.

1) հրապարակելու համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներն ու ուղերձները.
2) համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
3) **համայնքի ղեկավարից պահանջելու և ստանալու նրա, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:**

Հարց 13. Համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատում է.

1) համայնքի ղեկավարը.
2) **համայնքի ավագանին.**
3) ՀՀ կառավարությունը:

Հարց 14. Ո՞վ է իրականացնում համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունը՝

1) **համայնքի ավագանին իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ.**

2) ՀՀ մարզպետը.
3) համայնքի ղեկավարը ավագանու որոշմամբ:

Հարց 15. Համայնքի ղեկավարը պատասխանատու է՝

1) **համայնքի ավագանու առջև.**
2) ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի առջև.
3) ՀՀ վարչապետի առջև:

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. «Տեղական ինքնակառավարման հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, «Պետական ծառայություն», Երևան, 2002 թ.

2. Ղազարյան Է., 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին, հեղինակային հրատարակչություն, Երևան, 2003 թ.

3. Մովսիսյան Վ., «Ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում», Երևան, 2007 թ.
4. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, 2016 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
4. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք
5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
6. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք
7. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

Համայնքի ավագանու իրավական կարգավիճակը, ընդհանուր և վերահսկողական բնույթի լիազորությունների և գործառույթների շրջանակը

Հեղինակ՝ Ժիրայր Ղազարյան

Համակարգչային ձևավորող՝ Հասմիկ Նավասարդյան

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ